ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 40-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ Հանձնաժողով)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 115

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Սևակի թաղամաս N 20-րդ փողոց, 2-րդ փակուղի N 16 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ շենքի (մասնաշենք 1, 2) կառուցման նախագծային փաստաթղթերը ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության ենթարկելու վերաբերյալ

1. Հանձնաժողովը ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Սևակի թաղամաս N 20-րդ փողոց, 2-րդ փակուղի N 16 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ շենքի (մասնաշենք 1, 2) կառուցման նախագծային փաստաթղթերի ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությանը տալիս է դրական եզրակացություն:
2. Կառուցապատման գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Օբյեկտի ցուցանիշները.
   1) կառուցվող օբյեկտի հարկայնությունը՝ 1-ին մասնաշենք՝ 15 հարկ, 2-րդ մասնաշենք՝ 8-15 հարկ
   2) նախագծային կազմակերպության անվանումը՝ «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, ՀՀ քաղաքաշինության կոմիտե 24 06 2024թ.